«Երիտասարդ պատմաբանների ասոցիացիա» ՀԿ EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պարտադիր ատեստավորում-2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Երևանի Գ.Չաուշի անվան հ.188 հիմն. դպրոցի ուսուցչուհի՝ Ն.Բասոյան

Բովանդակություն

Ներածություն 3

1. Ի՞նչ դեր ունի ծնողը կրթության կազմակերպման գործընթացում 5

2. Ինչպե՞ս է կազմակերպվում ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ քիմիայի դասավանդման պրոցեսում և ի՞նչ ազդեցություն ունիր այդ համագործակցություն 9

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Այսօր հանրակրթական դպրոցներում հիմնախնդիրները բազմազան են: Մասնավորապես՝ դպրոց-ծնող-մանկավարժ օղակում աստիճանաբար առաջ են գալիս այնպիսի անհամաձայնություններ, որոնք ակնհայտորեն խանգարում են դպրոցի կայացմանը, խորհուրդների լիարժեք աշխատանքին:

Արդի սոցիալ–կրթական պայմաններում ապահով մանկության համար շատ կարևոր է երեխայի դաստիարակության գործում դպրոց-ընտանիք համագործակցության ձևերի արդիականացումը: Այսօր և՛ ընտանիքը, և՛ դպրոցը դեռևս մնում են այն հիմնական սոցիալական ինստիտուտները, որոնք իրականացնում են երեխայի սոցիալականացումն ու դաստիարակությունը:

Կարծում եմ երեխայի դաստիարակության գործընթացում դպրոց և ընտանիք համագործակցությունը արդիականացնելու և արդյունավետ դարձնելու համար պիտի հաշվի առնել ժամանակակից հասարակության մեջ կատարվող փոփոխությունները, հասարակական բարեփոխումները, որոնք անմիջապես անրադառնում են ինչպես դպրոցի, այնպես էլ ընտանիքի վրա: Մանկության, ընտանիքի և դպրոցի համագործակցությունը կայացնելու, ուսուցչի և ծնողի դաստիարակչական գործունեությանն արդյունավետությունը բարձրացնելու, երեխայի համար միասնական դաստիարակչական տարածք ստեղծելու և ընտանեկան ու դպրոցական դաստիարակությունն ինտեգրելու հարցով զբաղվել են աշխարհի բազմաթիվ գիտնականներ: Սակայն այս հիմնախնդիրը առանձնահատուկ են ամեն մի ազգին: Այս իմաստով մենք՝ հայերս, մեր նախնիներից ստացել ենք հարուստ ժառանգություն:

Թեմայի նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ

նրանց օրինական ներկայացուցիչների հետ: Աշխատանքի նպատակից ելնելով առաջ եմ քաշել հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել թե ինչ դեր ունի ծնողը կրթության կազմակերպման գործընթացում.
- Ուսումնասիրել, թե ինչպես է կազմակերպվում ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների հետ.
- Վեր հանել ուսուցիչ-ծնող փոխհամագործակցության ընթացքի ազդեցությունը քիմիայի դասավանդման պրոցեսում:
- Սահմանել ճիշտ և սահուն համագործակցության բանաձևը:

1. Ի՞նչ դեր ունի ծնողը կրթության կազմակերպման գործընթացում

Հաճախ դասապրոցեսում բախվում եմ բուն ակադեմիական կրթության հետ չառնչվող երևույթների, ինչպիսիք են, օրինակ, սովորողների միջանձնային կոնֆլիկտների, ոչ պատասխանատու վարքի հետ, առանձին երեխաների՝ տվյալ պահի հուզմունքը կամ տարբեր պատճառներով պայմանավորված բարդ հոգեվիճակը, տրամադրության անկումը և այլն:

Այստեղ արդեն կարևորվում է իմ ոչ այնքան կրթողի, որքան աջակցողի ու խնամողի դերը: Ուստի կարևոր է, որ ես, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցիչ, ունենա անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ այդ դերը ստանձնելու և իրավիճակն արդյունավետ հասցեագրելու համար, ինչպես նաև պատասխանատու վարքային դրսևորումների առաջ քաշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր օրերում կրթությունը վերածվում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ, այստեղ հիմնախնդիրների շարքում առանձնապես կարևորում եմ երեխայի արժեհամակարգի ձևավորումը, որի իրականացման գործընթացում հատկանշական է մանկավարժական խորհրդատվության միջոցով երեխայի ուղեկցումը, արարքների ուղղորդումը, կարգապահական շեղումների վերացումը և նրա նոր՝ բարոյահոգեբանական նկարագրի կերտումը: Ես համոզված եմ, որ ընտանիքն ազդում է երեխայի վրա իր մթնոլորտով, անդամներով, մշակութային և գիտական զարգացվածությամբ, միասնականությամբ, բարոյական և ինտելեկտուալ համոզմունքներով,ընտանեկան ավանդույթներով: Ըստ իս՝ երեխայի դաստիարակության ժամանակ հնարավոր են սխալներ և անհաջողություններ, սակայն ծնողների գերխնդիրն է ստեղծել երեխայի համար

այնպիսի պայմաններ, որոնք կկանխեն երեխայի՝ ծնողների կողմից չսիրված և անտեսված լինելու զգացումը: Այսինքն՝ երեխան պետք է վստահ լինի, որ իրեն սիրում են:

Գոյություն ունեն ծնողների մանկավարժական իրազեկության մի քանի ավանդական ձևեր, որոնցից ամենալայն տարածումն ունեն ծնողական ժողովները, ծնողների հետ տարվող անհատական զրույցները, որը դասղեկի,դասավանդող ուսուցիչների և դպրոցի հոգեբանի գործառույթն է, և դպրոցում կազմակերպված բաց դռների օրերը: Մեր օրերում շատ կարևոր է, որ ծնողների հետ տարվող իրազեկման աշխատանքները ստանան նոր բովանդակություն՝ հիմնվելով տարբեր տարիներով արմատացած ավանդական մոտեցումներից: Ծնողական ժողովներին կամ հայտարարված բաց դռների օրերին երեխայի գնահատականներով, առաջադիմության հետ կապված դժգոհություններով և վարքագծով հետաքրքրվելու հետ մեկտեղ շատ քիչ ծնողներ են փորձում հասկանալ, թե ինչպիսի հուզական ներաշխարհով է երեխան այդ օրերին ներկայացել դպրոց, և որն է եղել նրա առաջադիմության անկման կամ վատ վարքագծի դրսևորման պատճառը: Հետևապես, անհրաժեշտություն է ծագում ծնողին իրազեկելու դաստիարակության գործընթացում հուզականության կարևորության մասին:

Ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի վրա դրսևորվում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթով, նրա անդամների օրինակի և խոսքի միջոցներով: Ընտանիքը, որպես հասարակական մի բջիջ, կապված է հասարակական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձությունները իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Ծնողների լավատեսությունը, հայրենասիրությունը, նրանց կենսուրախությունը և հասարակական ակտիվությունը ընտանեկան միջավայրը դարձնում են կենսուրախ և հասարակայնորեն առողջ: Լուրջ նշանակություն ունի նաև ընտանիքի կյանքի կազմակերպվածությունը, որոշակի կարգ ու կանոնը, սովորույթները,

ավանդույթները, մինչև անգամ բնակարանի տեսքը նույնպես որոշում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթը:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոցներից է նաև ընտանիքի անդամների անձնական օրինակը: Վաղուց հայտնի է, որ երեխայի բնությանը հատուկ է ընդօրինակելը: Երեխան մշտապես դիտում է իրեն շրջապատող մարդկանց, նրանց գործերը, տեսնում է նրանց վերաբերմունքը մյուս մարդկանց ու երևույթների նկատմամբ և աննկատելիորեն ընդօրինակում: Սակայն երեխան ընդօրինակում է ոչ միայն դրականը, այլև բացասականը: Երբեմն ծնողները տեսնելով երեխայի այս կամ այն բացասական հատկությունները, մնում են զարմացած, այնինչ դրանց արմատները շատ հաճախ գտնվում են ընտանիքում, ծնողների արարքներում[1]:

Ներկա պայմաններում բազում ծնողներ հենց իրենք են ցանկանում ընդգրկվել երեխայի կրթության գործում: Միայն թե շատերը չգիտեն, թե ինչպես: Կրթության գործում ծնողներին ներգրավելու հնարավորությունները ստեղծելիս դպրոցը նաև պետք է հարցնի ծնողի կարծիքը: Պետք է ուսումնասիրել հաղորդակցման ոչ թե մեկ, այլ մի քանի ուղիներ: Փոխադարձ հաղորակցումն ամենակարևոր պահանջներից մեկն է այսօր[2]:

Կան ծնողներ, որոնք ձգտում են ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ: Ոմանք էլ խուսափում են մանկավարժ-ծնող համագործակցությունից: Մի մասն էլ տեղեկացված չէ կամ չունի համապատասխան հնարավորություն: Որպեսզի բոլորն էլ ներգրավվեն այդ գործընթացի մեջ, հարկավոր է ստեղծել համատեղ աշխատանքային պայմաններ: Մանկավարժական գործընթացի մեջ բոլորի ներգրավվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական խորհրդատվություն: Դա հարկավոր է ծնողական փոքրիկ խմբերի ստեղծման միջոցով: Ծնողները պետք է լավ ճանաչեն իրենց երեխայի

---

1 Лихачев Б.Т. Педагогика: курс лекций. – М.: Владос, 2010, էջ 85:

2 Ефремов О.Ю. Педагогика: учебное пособие.–Спб.: Питер, 2016, էջ 41:

դրական և բացասական կողմերը, որպեսզի կարողանան հավասարակշռել դրանք՝ հիմնվելով դրականի վրա, և խուսափեն բացասականից[3]:

Դպրոց–ընտանիք համագործակցության համակարգում այսօր հիմնականում կիրառվում են դասարանական և համադասարանական ծնողական ժողովները և ծնողների հետ անհատական խորհրդատվությունը: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները[4]:

Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է:Կարծում եմ,որ արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար մեր դպրոցում կիրառվում են արդյունավետ մշակված միջոցներ, օր. տեղեկագրեր, կայքէջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: Նմանատիպ մեխանիզմները դպրոցում մշակվել են ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով: Ես երբեմն փորձում եմ ծնողների ներգրավվածությունը ծնողի աչքով քննարկել: Վստահորեն կարող եմ ասել,որ մանկավարժներս պետք է խրախուսենք ծնողներին, նրանց տեղեկացնենք, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսենք այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Եվ առհասարակ հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին: Տնօրենը և ուսուցիչը

---

[3] Թոփուզյան Ա. Օ . «Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ» , Եր. 2009թ էջ 241:

[4] Նույն տեղում, էջ 45-46:

ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն[5]: Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակութային տարբերությունը:

2. Ինչպե՞ս է կազմակերպվում ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ քիմիայի դասավանդման պրոցեսում և ի՞նչ ազդեցություն ունի այդ համագործակցությունը սովորողի կյանքում

Քիմիան, լինելով բնական գիտությունների շարքում, օգնում է լուծելու կյանքի առօրյա խնդիրներ, նպաստում մարդու բարոյական վարքի դաստիրակմանը շրջակա միջավայրի նկատմամբ, տալիս անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ առօրյայում կիրառելու համար:

Քիմիայի՝ որպես դասավանդվող առարկայի բովանդակային մեծ ծավալը, առանձին դեպքում նաև ոչ մատչելի տերմինաբանությունն ու անվերջ թվացող բանաձևերը շատ դեպքերում այն դարձնում են ոչ այնքան սիրելի, ուստի առաջանում է ուսումնական գործընթացը հետաքրքիր ու բովանդակալից կազմակերպելու խնդիրը, որպեսզի սովորողները ընկալեն դասընթացը և ստանան գիտելիքներ, ձեռք բերեն հմտություններ, որոնք հետագայում անհրաժեշտ կլինեն՝ անկախ սովորողի հետագա մասնագիտությունից: Սովորեցնել քիմիան միայն ավանդական մեթոդներով, այսինքն՝ ձևավորելով

---

5 Մարիենկո Ի. Ս. «Դպրոցական դաստիարակության բովանդակությունը» «Լույս» Եր. 1978թ., էջ 181:

քիմիական գրագիտություն, սովորեցնելով հաշվարկներ կատարել, տալով առավելագույնս տեսական գիտելիքներ, հնարավոր չէ[6]:

Քիմիայի ժամանակակից ուսուցիչը պետք է ոչ միայն տիրապետի առարկայական խոր գիտելիքների, մեթոդական հնարների, այլև ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, կիրառի դրանք գործնականում՝ մոդելավորելով և վերլուծելով տարբեր մանկավարժական իրավիճակներ: Քիմիայի դասերին օգտագործվող մանկավարժական տեխնոլոգիան դիտվում է որպես ուսուցման և դաստիարակության գործընթացների վերարտադրման միջոցների ու մեթոդների ամբողջություն, որը թույլ է տալիս իրականացնել կրթական նպատակները: Դա երեխայի զարգացման, ուսուցման ու դաստիարակության գործընթացների վրա ազդեցության միջոցներից մեկն է[7]:

Դպրոցում իմ աշխատանքային գործունեության ընթացքում առաջանում են տարատեսակ հարցեր և խնդիրներ, որոնց արդյունավետ լուծման համարես քննարկում կամ համագործակցում եմ ծնողի հետ: Դրանք կարող են լինել հոգեբանական և սոցիալական խնդիրներ, ինչպես նաև գործնական աշխատանքների հետ կազմակերպման ու դրան մասնակցության խնդիրներ: Նման հարցերի լուծման և կանխման համար ձևավորել եմ արդյունավետ ուսուցիչ-ծնող փոխհարաբերություններ: Լիահույս եմ, որ քիմիայի դասավանդման փորձի ժամանակ ծնող-ընտանիք սերտ համագործակցությունը հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացում հետևյալ ասպեկտների համալիր և համակարգված կիրառումը՝

- ուսումնական նյութի ուսումնասիրման խոշոր բլոկներով պլանավորում. սովորողների մոդուլային ուսուցում, մոդուլային ստուգում և գիտելիքների հաշվառում.

---

[6] Мухина С. А., Соловьева А. А., Современные инновационные технологии обучения. М.: 2008, էջ 41:

[7] Гильманшина С. И., Профессиональное мышление учителя химии и его формирование. Казань: Изд-во Казанск.ун-та, 2015, էջ 85-89:

- ամբողջ դասագործընթացում քիմիայի աշխատանքային տետրերի օգտագործում.
- դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպման ոչ ավանդական ձևերի կիրառում (դաս-դասախոսություններ, կոնֆերանսներ, դաս-խաղեր, սեմինարներ և այլն).
- քիմիական նյութերի ուսումնասիրություն ըստ որոշակի պլանի.
- տարբեր սխեմաների օգտագործում, որոնք արտացոլում են առանձին նյութերի հատկությունները և քիմիայի առանձին բաժինների փոխադարձ կապը.
- քիմիայի ուսուցման հետաքրքրականություն.
- դիդակտիկ խաղեր.
- դիդակտիկ քարտերով սովորողների աշխատանքի համակարգ.
- քիմիայի ուսուցման մեջ թեստային և համակարգչային տեխնոլոգիաներ.
- մոդելների, աղյուսակների և սխեմաների օգտագործում. քիմիայի խմբակների, նախասիրական պարապմունքների և էֆեկտիվ դասընթացների ինտեգրված և միջառարկայական կապերի վրա հիմնված ծրագրերի մշակում և պրակտիկայում ներդնում.
- դասագրքերում փորձերի համար հանձնարարվող քիմիական մի շարք ռեակտիվ նյութերի փոխարինում առավել մատչելի և առողջության համար անվտանգ նյութերով.
- վիդեո-դասեր և վիդեո-փորձեր քիմիայի ուսուցման մեջ. ուսումնական գործընթացում իմիտացիոն փորձերի անցկացում՝ կենցաղային քիմիայի պատրաստուկների և դեղամիջոցների օգտագործմամբ.
- նյութերի հատկությունների ուսումնասիրության ժամանակ քիմիական փորձերի կիրառում. սովորողների տնային փորձերի,

հետազոտական աշխատանքների և արտադասարանական աշխատանքների կազմակերպման այլ ձևերի կիրառում[8]:

Քիմիայի դասավանդման գործընթացում ծնողների ներգրավվածությունը շոշափելի նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի քիմիայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են քիմիայի կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ձեռքբերումներ և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Քիմիայի դասավանդման պրոցեսում ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Ես, որպես քիմիայի ուսուցիչ, գտնում եմ, որ ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն: Համագործակցության միջոցով ինձ մոտ առաջ է գալիս ավելի մեծ հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ. ես ավելի մեծ բավարարվածություն եմ ունենում իմ մասնագիտությունից և երեխայի արդյունքներից:

Բացի այդ հարկ եմ համարում նշել, որ կրթական գործընթացին ծնողներին ներգրավվելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքները իմ կողմից տարվում են հիմնականում ճանարողական նպատակով, որտեղ նպատակ եմ դնում ծնողներին

[8] Общая методика обучения химии / Под ред. Р. Г. Ивановой. М., “Дрофа”, 2007, էջ 85:

ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորվող երեխաների դաստիարակման գործնական հմտություններին:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալ թեման, հարկ եմ համարում նշել, որ ընտանիքն այն առաջնային խումբն է, որը վճռական դեր է խաղում իր կազմում զարգացող երեխաների ինքնագիտակցության ծագման ու ձևավորման գործում: Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական երեխային.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ երեխայի հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները:

Դպրոցը երեխային տալիս է ակադեմիական գիտելիքներ և ձևավորում գիտակցական վերաբերմունք իրականության նկատմամբ,իսկ ընտանիքն իր հերթին ապահովում է երեխայի գործնական փորձառությունը կյանքում: Երեխայի հետազոտման, նրա կարողությունների, հմտությունների և դժվարությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի համագործակցության միակ շարժառիթն այդ երկու կողմերի ընդհանուր հետաքրքրություններն ու շահերն են:Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև գործընթաց է,որի միակ նպատակը երեխայի որակյալ կրթության ապահովումն է:Ծնողները և ուսուցիչները հանդիսանում են միևնույն երեխայի զարգացմանը նպաստող,նրա կրթությունը և դաստիարակությունը իրականացնող անձինք: Ուստի երեխայի դաստիարակությունը և ուսումնառությունը արդյունավետ կարող է լինել միայն նրանց ակտիվ համագործակցության պայմաններում: Դա նշանակում է,որ անհրաժեշտ է սահմանել դաստիարակության,ուսումնառության և զարգացման գործընթացի միասնական նպատակներ,ունենալ միասնական ակնկալիքներ ու հայացքներ,համատեղ ուժերով մշակել ուսումնադաստիարակչական գործընթացում առաջացած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Որպես ամփոփում պետք է նշեմ նաև, որ սովորողների ուսուցման, զարգացման և դաստիարակության մեջ հնարավոր չէ հասնել առավելագույն արդյունքի, եթե քիմիայի դասավանդման գործընթացում չի կիրառվում ընտանիք-ուսուցիչ սերտ համագործակցությունը: Միայն ընտանիքի հետ ուսուցչի համալիր սերտ համագործակցությունը և որոշակի դպրոցի հետ

ադապտացված մոտեցումը ուսուցչին կարող է թույլ տալ հասնելու լավագույն արդյունքի ուսումնադաստիարակչական գործունեության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր 1, 2013.
2. «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-որ դարի մարտահրավերը. կախման և հաղթահարման ուղիները» , «Մանկավարժ» հր. 2016թ.
3. Бороздина Г.В. Психология и педагогика / под ред. Баркова Г.А. – М.: Юрайт-Издат, 2014.
4. Թոփուզյան Ա. Օ . «Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ» , Եր. 2009թ.
5. Կովալյովա Ա.Գ. «Ընտանեկան դաստիարակության հոգեբանություն», Եր. 1980թ.
6. Մարիենկո Ի. Ս. «Դպրոցական դաստիարակության բովանդակությունը» «Լույս» Եր. 1978թ.
7. Вайдорф-Сысоева М.Е. Педагогика: коспект лекций / под ред. Гришиной Л.В. – М.: Юрайт, 2010.
8. Гильманшина С. И., Профессиональное мышление учителя химии и его формирование. Казань: Изд-во Казанск.ун-та, 2015.
9. Ефремов О.Ю. Педагогика: учебное пособие.–Спб.: Питер, 2016.
10. Журин А. А., Медиаобразование школьников на уроках химии. М., 2004.
11. Керинг П.К., “Семейный контекст: удовлетворенность супружеством, родительский стиль и речевое поведение с детьми”, “Вопросы психологии”, 1990, N 1.
12. Лихачев Б.Т. Педагогика: курс лекций. – М.: Владос, 2010.
13. Мухина С. А., Соловьева А. А., Современные инновационные технологии обучения. М.: 2008.

14. Общая методика обучения химии / Под ред. Р. Г. Ивановой. М., “Дрофа”, 2007.